

5.4. 2006թ. օգոստոս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիտորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2006թ. օգոստոսին ունեցել է հետևյալ բնութագիրը:

Օդային ավազանի որակի մոնիտորինգ: Օգոստոսին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 3356 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- **ք.Երևանում** վերցվել է օդի 1682 փորձանմուշ: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 3.8, ծծմբի երկօքսիդինը՝ 2.0, ազոտի երկօքսիդինը՝ 2.5, գետնամերձ օզոնինը՝ 2.3, բենզոլինը՝ 2.0 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.6, տոլուոլինը՝ 1.6 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները բարձրացել են 1.2-ակաճան, իսկ գետնամերձ օզոնինը՝ նվազել 1.6, բենզոլինը՝ 1.3, տոլուոլինը՝ 1.4 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում, 2006թ. օգոստոս

| Աղտոտիչ նյութերի անվանումը | Կոնցենտրացիաները, մգ/մ ³ | |
|----------------------------|-------------------------------------|---------------|
| | առավելագույն | միջին ամսական |
| Փոշի | - | 0.57 |
| Ծծմբի երկօքսիդ | 0.42 | 0.10 |
| Ազոտի երկօքսիդ | 0.394 | 0.100 |
| Ազոտի օքսիդ | 0.25 | 0.06 |
| Գետնամերձ օզոն | 0.152 | 0.068 |
| Բենզոլ | 0.700 | 0.195 |
| Տոլուոլ | 0.942 | 0.174 |
| Քսիլոլ | 0 | 0 |
| Էթիլբենզոլ | 0 | 0 |
| Քլորոպրեն | 0 | 0 |

- **ք.Գյումրիում** փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 27 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.8 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:
- **ք.Վանաձորում** վերցվել է օդի 1053 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը և ազոտի երկօքսիդինը՝ 1.2-ակաճան, բենզոլինը՝ 5.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2, ազոտի երկօքսիդինը՝ 1.4, բենզոլինը՝ 4.7 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում, 2006թ. օգոստոս

| Աղտոտիչ նյութերի անվանումը | Կոնցենտրացիաները, մգ/մ ³ | |
|----------------------------|-------------------------------------|---------------|
| | առավելագույն | միջին ամսական |
| Փոշի | - | 0.20 |
| Ծծմբի երկօքսիդ | 0.25 | 0.06 |
| Ազոտի երկօքսիդ | 0.340 | 0.049 |
| Ազոտի օքսիդ | 0.29 | 0.03 |

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

| Աղտոտիչ նյութերի անվանումը | Կոնցենտրացիաները, մգ/մ ³ | |
|----------------------------|-------------------------------------|---------------|
| | առավելագույն | միջին ամսական |
| Բենզոլ | 1.493 | 0.522 |
| Տոլուոլ | 0.978 | 0.245 |
| Քսիլոլ | 0 | 0 |
| Էթիլբենզոլ | 0 | 0 |

- **ք.Հրազդանում** ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 27 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.8 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:
- **ք.Ալավերդում** վերցվել է օդի 540 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 10.0, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.8 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.6, ծծմբի երկօքսիդինը՝ 1.3, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում, 2006թ. օգոստոս

| Աղտոտիչ նյութերի անվանումը | Կոնցենտրացիաները, մգ/մ ³ | |
|----------------------------|-------------------------------------|---------------|
| | առավելագույն | միջին ամսական |
| Փոշի | - | 0.15 |
| Ծծմբի երկօքսիդ | 0.92 | 0.50 |
| Ազոտի երկօքսիդ | 0.087 | 0.048 |
| Ազոտի օքսիդ | 0.04 | 0.03 |

- **ք.Արարատում** ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 27 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.8 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

Մակերևութային ջրերի որակի մոնիտորինգ: Օգոստոսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 38 գետերի, Կեչուտի, Ախուրյանի, Արփիլճի, Ապարանի, Ազատի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 111 դիտակետերից: Վերցվել է 120 փորձանմուշ, որոշվել է 20-22-ական ցուցանիշ:

- **Դեբեդ գետի ավազան:** Փամբակ, Դեբեդ, Չորագետ, Մարցիգետ և Ախթալա գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են նիտրիտ, ամոնիում իոնների, ԹԿՊ₅-ի, իսկ Ախթալա գետի գետաբերանից վերցված փորձանմուշում նաև սուլֆատ իոնի ՍԹԿ-ները: Փամբակ գետում՝ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում և Ախթալա գետի գետաբերանում դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է, համապատասխանաբար՝ 4.05 և 4.90 մգ/դմ³: Ախթալա գետի գետաբերանից վերցված փորձանմուշում դիտվել է սուլֆատ իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹԿ-ն գերազանցվել է 12.2 անգամ: Սպիտակ քաղաքից ներքև, Այրում գյուղից վերև, ինչպես նաև Մարցիգետի թափման կետից ներքև ընկած հատվածքներում և Ախթալա գետի գետաբերանում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-7.3-ական անգամ (Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում՝ 9.4 անգամ): Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 7.3, իսկ Ախթալա գետի գետաբերանում՝ 3.9 անգամ: Վանաձոր քաղաքից ներքև և սահմանի մոտ ընկած հատվածքներում, ինչպես նաև Ախթալա գետի գետաբերանում ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-1.9-ական անգամ: Որոշված նյութ ցուցանիշները դիտվել են բույլատրելի նորմաների սահմաններում:
- **Աղստև գետի ավազան:** Փորձանմուշներ վերցվել են Աղստև և Գետիկ գետերից: Աղստև գետում՝ Դիլիջան քաղաքից ներքև ընկած հատվածքում, դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 4.48 մգ/դմ³: Այդ հատվածքում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 6.5, ամոնիում իոնինը՝ 2.5, ԹԿՊ₅-ինը՝ 1.4 անգամ: Իջևան քաղաքից վերև և սահմանի մոտ ընկած հատվածքներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 1.9 և 2.0 անգամ, իսկ ամոնիում իոնի ՍԹԿ-ն՝ 1.6 և 1.9

անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

- **Ախտության գետի ավազան:** Փորձանմուշներ վերցվել են Ախտության, Աշոցք և Կարկաչուն գետերից, Արփիլճի և Ախտությանի ջրամբարներից: Ախտության գետում՝ Գյունրի քաղաքից ներքև ընկած հատվածքում, դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ լուծված թթվածնի քանակը կազմել է 5.53մգ/դմ³: Այդ հատվածքում դիտվել է նաև նիտրիտ իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹ4-ն գերազանցվել է 12.9 անգամ: Մյուս դիտակետերից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹ4-ն գերազանցվել է 1.1-6.9, նիտրիտ իոնի ՍԹ4-ն՝ 2.5-4.2 անգամ:
- **Արփա գետի ավազան:** Արփա և Եղեգիս գետերից, ինչպես նաև Կեչուտի ջրամբարից վերցված փորձանմուշներում որոշված ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Հրազդան գետի ավազան:** Հրազդան, Մարմարիկ, Գետառ գետերից և երևանյան լճից վերցված փորձանմուշներում գերազանցվել են ԹԿՊ₅-ի, ամոնիում և նիտրիտ իոնների ՍԹ4-ները: Հրազդան գետի Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում դիտվել է արտակարգ բարձր աղտոտվածություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 1.36 մգ/դմ³, որի հետևանքով դիտվել է նաև ԹԿՊ₅-ով բարձր աղտոտվածություն՝ 23.8 մգՕ₂/դմ³: Այդ դիտակետում, ինչպես նաև Գետառի գետաբերանի հատվածքում դիտվել է ամոնիում իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹ4-ն գերազանցվել է, համապատասխանաբար՝ 76.8 և 14.6 անգամ: Մյուս դիտակետերից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹ4-ն գերազանցվել է 5.2-10.2, ամոնիում իոնինը՝ 1.2-3.6, ԹԿՊ₅-ինը՝ 1.1-1.6 անգամ:
- **Սևջուր գետի ավազան:** Փորձանմուշներ վերցվել են Սևջուր, Քասախ, Գեղարոտ, Հախվերդ գետերից և Ապարանի ջրամբարից: Սևջուր գետից և Ապարանի ջրամբարից վերցված փորձանմուշներում ԹԿՊ₅-ի ՍԹ4-ն գերազանցվել է 1.2-1.4-ական անգամ: Քասաղ գետից վերցված փորձանմուշներում նիտրիտ իոնի ՍԹ4-ն գերազանցվել է 1.6-1.9 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Ողջի գետի ավազան:** Փորձանմուշներ վերցվել են Ողջի և Գեղի գետերից: Կապան քաղաքից ներքև ընկած հատվածքում և Գեղի գետի գետաբերանում նիտրիտ իոնի ՍԹ4-ն գերազանցվել է համապատասխանաբար, 2.0 և 3.0 անգամ, իսկ Կապան քաղաքից վերև ընկած հատվածքում 1.1 անգամ գերազանցվել է ԹԿՊ₅-ի ՍԹ4-ն: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Որոտան գետի ավազան:** Որոտան, Սիսիան, Տաթև և Գորիսգետ գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են ԹԿՊ₅-ի, նիտրիտ և ամոնիում իոնների ՍԹ4-ները: Սիսիան և Գորիս քաղաքներից ներքև ընկած հատվածքներում նիտրիտ իոնի ՍԹ4-ն գերազանցվել է համապատասխանաբար, 1.5 և 10.0 անգամ: Սիսիան քաղաքից ներքև ընկած հատվածքում և Սիսիան գետի գետաբերանում ամոնիում իոնի ՍԹ4-ն գերազանցվել է համապատասխանաբար, 1.3 և 1.1 անգամ: Գորիս քաղաքից ներքև ընկած հատվածքում ԹԿՊ₅-ի ՍԹ4-ն գերազանցվել է 1.6 անգամ: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Սևանա լճի ավազան:** Սևանա լճի ավազանի 11 գետերից և Սևանա լճի 17 դիտակետերից վերցված 42 փորձանմուշներում որոշված ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Արաքս գետ:** Հրազդան գետի թափման կետից վերև և ներքև, ինչպես նաև Արմաշ գյուղից ներքև ընկած հատվածքներում 2.0-3.8-ական անգամ գերազանցվել են նիտրիտ իոնի, իսկ 4.1-6.2-ական անգամ՝ ամոնիում իոնի ՍԹ4-ները: Հրազդան գետի թափման կետից ներքև ընկած հատվածքում 1.4 անգամ գերազանցվել է ԹԿՊ₅-ի ՍԹ4-ն: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Ազատ և Վեղի գետեր:** Ազատի ջրամբարից և Վեղի գետի Ուրցածոր գյուղից ներքև ընկած հատվածքից վերցված փորձանմուշներում որոշված ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Մեղրիգետ գետ:** Մեղրիգետի գետաբերանից վերցված փորձանմուշում 1.2 անգամ գերազանցվել է ԹԿՊ₅-ի ՍԹ4-ն: Որոշված մյուս ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2006թ. օգոստոս

| Ջրային օբյեկտի անվանումը | Դիտակետի համարը | Դիտակետը (հատվածքը) | ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները | | | | |
|--------------------------|-----------------|---------------------------------------|--|---|---|---|--|
| | | | Լուծված թթվածին (ՍԹԿ՝ 6.0 մգ/լմ ³ -ից ոչ պակաս) | ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/լմ ³) | Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 գN/լմ ³) | Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/լմ ³) | Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/լմ ³) |
| Փամբակ | 2 | Սպիտակ քաղաքից 0.5 կմ ներքև | - | - | 0.033 | - | - |
| | 4 | Վանաձոր քաղաքից 4.5 կմ ներքև | 4.05 | 5.72 | 0.225 | 2.86 | - |
| Դեբեդ | 5 | Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև | - | - | 0.175 | - | - |
| | 6 | Այրում գյուղից 0.5 կմ վերև | - | - | 0.060 | - | - |
| | 7 | ՀՀ պետական սահմանի մոտ | - | 4.34 | - | - | - |
| Ախթալա | 14 | Գետաբերան | 4.90 | 5.42 | 0.065 | 1.51 | 1218.0 |
| Աղստև | 16 | Դիլիջան քաղաքից 0.5 կմ ներքև | 4.48 | 4.08 | 0.155 | 0.97 | - |
| | 17 | Իջևան քաղաքից 1 կմ վերև | - | - | 0.045 | 0.63 | - |
| | 18 | Իջևան քաղաքից 9 կմ ներքև | - | - | 0.049 | 0.76 | - |
| Արաքս | 26 | Հրազդան գետի թափման կետից վերև | - | - | 0.048 | 2.41 | - |
| | 27 | Հրազդան գետի թափման կետից ներքև | - | 4.10 | 0.091 | 1.61 | - |
| | 28 | Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև | - | - | 0.053 | - | - |
| Ախուրյան | 31 | Ամասիա գյուղից 0.5 կմ վերև | - | - | - | 1.16 | - |
| | 32 | Ամասիա գյուղից 0.5 կմ ներքև | - | - | - | 0.81 | - |
| | 33 | Գյումրի քաղաքից 5 կմ վերև | - | - | 0.060 | 0.81 | - |
| | 34 | Գյումրի քաղաքից 5 կմ ներքև | 5.53 | - | 0.310 | 1.91 | - |
| Կարկաչուն | 38 | Ղարիբջանյան գյուղից 1 կմ ներքև | - | - | 0.100 | 2.71 | - |
| Սևջուր | 41 | Վաղարշապատ քաղաքից 11 կմ հարավ-արևելք | - | 3.71 | - | - | - |
| | 42 | Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև | - | 3.93 | - | - | - |
| Քասախ | 44 | Ապարան քաղաքից 0.5 կմ ներքև | - | - | 0.046 | - | - |
| | 47 | Գետաբերան | - | - | 0.038 | - | - |
| Հրազդան | 51 | Գեղամավան գյուղի մոտ | - | - | - | 0.51 | - |
| | 52 | Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև | - | - | - | 0.51 | - |
| | 54 | Արզնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև | - | - | - | 0.46 | - |
| | 55 | Ղարբնիկ գյուղի մոտ | 1.36 | 23.8 | 0.245 | 29.95 | - |
| | 56 | Գետաբերան | - | 4.78 | 0.125 | 0.86 | - |
| Մարմարիկ | 58 | Գետաբերան | - | - | 0.034 | - | - |
| Գետառ | 59 | Գետաբերան | - | 3.65 | 0.173 | 5.71 | - |
| Մեղրիգետ | 90 | Գետաբերան | - | 3.49 | - | - | - |
| Ողջի | 93 | Կապան քաղաքից 0.8 կմ վերև | - | 3.31 | - | - | - |
| | 94 | Կապան քաղաքից 0.8 կմ ներքև | - | - | 0.048 | - | - |
| Գեղի | 98 | Գետաբերան | - | - | 0.072 | - | - |
| Որոտան | 101 | Սիսիան քաղաքից 2 կմ ներքև | - | - | 0.036 | 0.51 | - |
| Սիսիան | 104 | Գետաբերան | - | - | - | 0.41 | - |
| Գորիսգետ | 107 | Գորիս քաղաքից 1.5 կմ ներքև | - | 4.74 | 0.240 | - | - |
| Արփիլիճ | 109 | Ամբարտակի մոտ | - | - | 0.070 | 1.71 | - |
| Ախուրյանի ջրամբար | 110 | Ամբարտակի մոտ | - | - | 0.090 | 0.41 | - |
| Ապարանի ջրամբար | 111 | Ամբարտակի մոտ | - | 4.14 | - | - | - |
| Երևանյան լիճ | 112 | Ամբարտակից գետի հոսանքով ներքև | - | 3.36 | - | 1.41 | - |